ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«15» Սեպտեմբերի 2023թ. N ՄՈ/392-Ա

ք. Արմավիր

«ԱՐԳԻՆԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱՐԻՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 226-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2023 թվականի սեպտեմբերի 11-ի N01/17/06402-2023 գրությունը և «Արգինայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2023 թվականի սեպտեմբերի 14-ի N67 գրությամբ ներկայացրած գրավոր բացատրությունը, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասի 26-րդ կետի պահանջները և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի N12-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված հավելվածի «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջների» N2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը չպահպանելու, դրանց պահանջներն ապահովելու, ինչպես նաև դպրոցի շենքի, դրա հարակից տարածքների մաքրման աշխատանքների նկատմամբ պատշաճ հսկողություն չիրականացնելու համար.

որոշում եմ՝

1. «Արգինայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Մարկոսյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

VERIFIED OCSP 15.09.2023 09:45:24 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ